

ԱՆՑԵԱԼՔ

ԴՐԻԱԳ ՄԸ ՄՈՒՐԱՏԻ ԿԵԱՆՔԷՆ *)

Եթէ յիշողութիւնս ինձ չի խարում, 1918-ին էր՝ հեռագիր մը ստացանք Աղզային Բիւրօից Ա. Ահարոնեան եւ Ն. Աղբալեան ստորագրութեամբ. «Ալէքսանդրապօլ մեկնեցէ՛ք, Խատիսեանից կստանա՛ք կարգադրութիւնը»: Էջմիածնից ճամբայ ընկած Կորիւն վրդ. եւ տողերիս զրոյը եւ նոյն օր ներկայացանք Քաղաքադլիսիս պ. Ա. Խատիսեանին, որից պէտք եղած պաշտօնական թղթերը ստանալով՝ հետեւեալ օր երկաթուղին նստանք: Ինձ վիճակած էր Խորասան կայարանը, իսկ ընկերիս՝ ուղղակի էրզրում քաղաք:

Սարիղամիշից Խորասան կայարանը 70 վերստ է եւ նոյն չափն է Խորասանից Կարին:

Պաշտօնատեղս հասնելուց անմիջապէս յետոյ ոռոտներից թողած բոլոր տեսակի պահեստները տիրապետեցի եւ կարդաւորելով՝ փետ. 25-ին գնացի Կարին՝ անցնելով Քեօփրի-Քեոյ-Հասան-Ղալա-էրզրում: Իջեւանեցի Մօսկովայի Կոմիտէի կայանը, ուր էին եւ Կորիւն եւ Զաւէն վարդապետները:

Որպէս Պարսկաստանի բանակին ընկերացող՝ ծանօթ էի Անդրանիկին եւ Սեպուհին եւ գնացի տեսութեան: Երբ ներկայացայ առաջնոյն, յուղած ըսաւ — «Ինչո՞ւ եկած ես, մենք վաղը կը թողունք քաղաքը. քանի որ եկած ես, քաղաքադլիսի հետ գնա մի քանի տներ յայտնի, որ ճանապարհ ելնեն, վաղը քաղաքը կը թողունք»:

Կարնոյ հարաւէն՝ Իլիմայի կողմէն չորս վերստ հեռու թիւրքերը պաշարած էին. այդ ճակատի վրա կուռւմ էին Սեպուհի զօրքերը, մինչդեռ Սեպուհը ինքը հիւանդ ընկած էր անկողնում: Ես քովն էի, երբ ներս մտաւ մի ղինւոր, ըստ ղինւորական կարգի ձեռքը ճակատին տանելով սպասեց հրամանի. «Ի՞նչ կայ, Սուրէն», հարցրեց Սեպուհը: «Մեր բանակը բոլոր ցրեցան. մի քանիսը գերի ընկան եւ շատեր կորսուեցան»:

*) Այս գրութիւնը մեզ ուղարկել է հանգուցեալ Խորէն վարդ. ի բարեկամներից մէկը: Տեղ եմք տալիս իբրեւ մի յուշ Սեբաստացի Մեծ Մարտիկի մասին:

Այս տաղնապի միջոցին կիւմիշխանայի կողմէն օգնութիւն կու-
ղէր Թորոքումը: Անդրանիկը օթոմոսպիլ նստելով չորս զինւած թիկ-
նապահներով իսկոյն օգնութեան վայրը հասաւ, բայց ինչ անցած-
դարձած էր որ իսկոյն յետ դարձաւ նոր կարգադրութիւն անելով:

Ամէն ոք իր գլուխը կորցրածի պէս էր: Մինչեւ անգամ եկեղե-
ցու բանալին էլ կորցրած էին եւ մէկը միւսին կը հարցնէր: Այս
տաղնապի միջոցին մեր շէնքի առաջ խոնկեց մի բաղմութիւն զին-
ւած ձիաւորների: Անոնց մէջէն մէկը թիկնաւէտ եւ խրոխտ ձայնով
կը պոռար. «Ով որ կուգէ մեռնել, քող ինձ հետ գայ»: Սերաստացի
հերոս Մուրատն էր: 37 հոգուց բաղկացած խմբով մը գնաց ճակա-
տեցաւ թիւրք բանակին հետ եւ ազատեց պաշարւած հայերին:

1918 թ. 26 փետր.: Մի պատմական թւական: Էրզրումի նահան-
ջը: Ամէն ոք, ով եւ ինչպէս, որ կարողացաւ սկսեց փախչել: Մերը
իր մանուկը ուրացած էր: Խուճապ ու գաղթ: Ամէնքը ուղքով կամ
սայլով, մըջիւնների նման շարուեղարան, կը գնան թողած ուղ-
մական պահեստները եւ պաշարեղէնները, որոնց թւում եւ 80-ի
չափ հիւանդները Սանասարեանի Դպրոց-Հիւանդանոցում:

Երբ ամէն ոք իր կեանքի մասին էր մտածում, անդին Մուրատը
իր քաջարի ընկերներովը կուեկով կը նահանջէր: Ան հազարաւոր
հոգիներու ազատագրութեան միջոցներ ստեղծեց, որոնք արտասու-
քով կազօթէին Մուրատի արեւշատութեան համար: Մի պառաւ մա-
միկ կապոյցը թելին տակ ճանապարհին ինձ կըսէր. «Հայր-Սուրբ,
պիտի չմեռնեմ մի անգամ էմ Մուրատին տեսնեմ, քող նոր Աստուծո
հոգիս առնի. նա մեր բոլորի կեանքը ազատեց քիւրքի բարբարո-
սութիւնից, ազատեց մեր հարսները եւ մատղաշ աղջիկները...»:

Անմահ Հերոսի այս վերջին օրհասականը ո՛չ Ձանգեղուրի եւ
ոչ Երզնկայի կռիւներին կը նմանէր, այլ մահու եւ կենաց դիւ-
ցազներգութիւնն էր: Մուրատը իր եւ իր ընկերների միջոցաւ հա-
զարաւոր կեանքերու ազատարար հանդիսացաւ:

ՀԱՄԱՌՅՐ ԱՅՆ ՇԻՐԻՄԻՆ, ՈՐԻ ՏԵՂԸ ՀԱՅԻՆ ԱՆՅԱՅՏ Է:

12 Սեպտ. 1927 թ.

ԽՈՐԷՆ ՎՐԳ. ԼԱԶԱՐԵԱՆ

Սաուր Միլվոֆի, Վիսֆ.

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊ. ՊԱԼԱՔԵԱՆ

Հոկտ. 8-ին, Մարտէյլում, մեռաւ Գրիգորիս Եպ. Պալաքեանը:
Հանգուցեալը Թողատցի էր, ծնւած 1879-ին: Նախնական կրթութիւ-
նը ստացել էր տեղական ազգային դպրոցում, ապա աւարտելով